

57

001(47)
8-50

Emz h
1898

1898. № 720.

508

ԱՐԻՍՏՈՑ ԱՌԱՋԻՆ ԳԻՏՈՒԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՂԱՄ ԳԻՒՂԱՑԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ՎԵՄԻԼԻ

ԼՈՄՈՆՕՍՈՎ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒՏԻ
ՏԵՇԻԿՈՒԹՅՈՒՆ
Ակադեմիա Նույն
ԽՍՀՄ

Ե. ԱԵԿՐԱՍՈՎԻ

Թարգմանեցին

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ և Ա. Տ.-ԻՄՐԱՅԵԼԵՅՆ.

ՅՈՒՆԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան:

1898

001(47)

2-50

1214.

Carm
1214

କୁମାର ପଟ୍ଟନାୟକ ୧୦୦୦

卷之三

డా. జాయిర్ కుమార్

לונדון

ՀԱՅՈՒԹՎԵՐ

Constituted? without regard to the particular

2021

ԱՐԻՍՏՈՑ ԱՐԱԶԻՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

001(47)

4-50

ԱՐԻԱՆԳԵԼՈՎԿ ԴԻՒՂԱՑԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՍԻԼԻՉ

ԼՈՒԾՈՒՎ.

Ե. ՆԵԿՐԱՍՈՎԻ.

Թարդմանեցին՝

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ և Ա. Տ.-ԻՎՐՈՅԵԼԵԱՆ.

፳፻፭፻

Տպարան Հայոց Հոգեոր Տեսչութեան:

1898

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСПРОИЗВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԱՐԱՋԱԲԱՆ

ԳՐՔՈՅՎԻՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԿՈՐ ՇԱՐԺԱՌԻՑԵ.

Ընդհանրապէս որպէս յայտնի է, Տայկական ներկայ գրականութիւնը չափազանց աղքատ է թարգմանական երկասիրութիւններից—սկսած ամենագիտնական, փիլիսոփայական զբքերից մինչև մանկական ժողովրդական... զբքերը: Նու մանաւանդ ամենամեծ պակասութիւնը նկատում է կենսագրական տեսութեանց մէջ, որոնց թիւը մի քանի հատից աւելի չէ անցնում: Ուստի հարկ զգալով ատելըրդ չհամարեցինք ձեռնարկել մի հին, փոշու մէջ՝ թաղուած զբքոյկի թարգմանութիւնը, որը բացի այն, որ կազմում է մի նշանաւոր մարդու կենսագրութիւն, այլև ներկայացնում է մի սքանչելի պատկեր և մանաւանդ մանկանց գէպի ուսումը խրախուսող մի օրինակ: Թէ ինչպէս մի պատճենի մանկութիւնից 'ի վեր ունենալով գէպի ուսումը խիստ հակում; ամենայն ինչ զսշում է իւր նպատակին հասնելու: 'Ի նկատի ունենալով այդ դարու կրթութեան ամենախիստ պակասութիւնը (որ Ուսուսաստանի նորաբողբոջ ժամանակն էր), իւր աննշան ծագումը, իրենց միջնավայրի անչափ հեռաւորութիւնը այդ ժամանակուայ փոքր 'ի շատէ յայտնի ուսման կենդրօններից և վերջապէս իւր ճնողների ատելըրդիւնը այդ բռնած դիւքի հա-

Ճազով. ցեյզորո. Տիֆլոս, 2 Մայ 1898 թ.

50400-ահ

36182-66



մար, այնուամենայնիւ չնայելով շրջապատող ան-
նպաստ հանգամանքներին, որոնք ապարդիւն հե-
տեանքների պէտք է հասցնէին պատանռւ վառ-
վոռւն յօյսելը, նա յաղթահարելով ամեն մի ար-
դելք, յագուրդ առւաւ իւր բուռն ցանկութիւն-
ներին Մի ընդունակութիւն և տոկուն եռանդ,
որի գոյութիւնը այժմ իսկ հազիւ է պատահում:

Ցաւալի է իսկապէս, որ ներկայ գրականու-
թիւնը զուրկ է ոչ միայն նշանաւոր, հանրահռչակ
գործիչների կենսագրութիւններից, այլ և սովորա-
կան, գրական ասպարէզում ծպին առողջ հեղինակ-
ների կենսագրութիւններից. քանի որ կենսագրու-
թեան մէջ արտափայլում է գործիչի անցեալը, —
ձնուելուց մինչև ասպարէզ մանելը և ամբողջ գոր-
ծունէութեան ընթացքը: Քանի որ թուումէ այդ
երկի մէջ այն քաղցր ու գառն ըսպէները, այն ան-
արգել ու աննպաստ պայմանները, որոնց մէջ երե-
ւոն են գալիս անձնաւորութեան ձգուումք, փարած
յաղթանակները — իւր երկաթաձուլ կամքի ու տո-
կուն եռանդի չնորդիւ հասնելու մի սուրբ իդէալի
և իւր կոչման համապատասխան անսպառ ոյժերով
գործելու: Այդ առթիւ կենսագրութեանց ընթեր-
ցումը մի աննման տպաւորութիւն թողնելով, որ-
պէս խթան զարկ է տալիս նոյն գաղափարներս
տոգորուած, նոյն կոչման ձգող պատանիներին:

Թարգմանիչներից.

ՈՐԻՍՈՅ Ո.Ո.Ա.ԶԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ ԳԻՒՂԱՑԻՆ

ՄԻՔԱՅԻ ՎԱՍԻԼԻՉ ԼՈՄՈՆՕՍՈՎ

Скоро самъ узнаешь въ школѣ
Какъ Архангельскій мужикъ
По своей и Божьей волѣ
Сталъ разуменъ и великъ.

I.

Խուսաց առաջի գիտնականը գիւղական տար-
րից էր: Նրան անուանում էին Միքայէլ Վասիլիչ
Լոմոնոսով: Նա գիւղացի Վասիլ Դորօֆեևիչը որ-
դին էր: Վասիլ Դորօֆեևիչը ապրում էր Արխան-
գելսկ նահանգի Խոլմոգոր քաղաքի մօտ գտնուող
Դենիսովսկ գիւղում: Նա քաղցրաբարոյ և «դէպի
որբերը ողորմած» մարդ էր: Ամառը և աշնան պա-
րապում էր ձկնորսութեամբ, իսկ ձմեռը բեռնակրու-
թեան արհեստով: աեղափոխում էր պետական ապ-
րանքներ — երբէմն Արխանգելսկ նահանգը, երբէմն
Սօլօվեցկ մենաստանը և երբէմն Հիւսիսային ծովի
մօտ գտնուող, մեղանից հեռու — Կոլա քաղաքը:

Նա գիւղացիների մէջ աղքատ չէր համարւում, մինչև անդամ հարևան գիւղի գովիրը անպատճութիւն չ'ամարեց իւր աղջիկը նրան տալու:

Ելենա Խւանովսան—այդպէս էին կոչում ջանհել հարսին, հեղաքարոյ և բարի կին էր 1711 թուականին՝ այն ժամանակ, երբ Ռուսաստանում թափառում էր Պետրոս Միհը և պարաստում պատերազմել տաճկաց հետ, Ելենան ծնեց մի որդի, որին մլլատելով կոչեցին Միհայէլ Այդ գիւղացին երեխան—Միհայէլը ապագայում դարձաւ Ռուսաց առաջին գիտնականը: Ելենա Խւանովսան երկար չ'ապրեց, և այսպիսով Վասիլ Դօրօֆենիչը այրիացաւ:

Շատ չ'անցած, նա մասձեց երկրորդ անդամ ամուսնանալ:

Որովհետև գիւղական կեանքի մէջ, ինչպէս յայտնի է, առանց տանտիկնոջ երկար մնալ դժուար էր, այդ պատճառով Վասիլը շուտով ամուսնացաւ:

Այժմ հարազատ մօրը փոխարինեց խորթ մայրը. խորթ որդուն, փոխանակ փաղաքշանքի, վիճակուեց ոտքի հարուածներ. բարի խօսքի տեղ—հայհյանքներ: Լաց էր լինում մանուկը և որբում արտասուքները կեղտոտ թեքերով: ում գանգատուել, ում ասել այդ գառնութեան մասին—չ'կարուք, նրա գանգատատեղին մնացել էր միայն հայրը, բայց նա բացակայում էր անից ամբողջ օրերը և վերջապէս երբ վերադառնում էր, խորթ

մայրը նրա ականջում միշտ փսփսում էր. «Որդի՛ և՛ յիմար է, և՛ անհնաղանդ, և՛ ծոյլ: Լինում էր, որ հայրը չէր կարողանում զսպել բարկութիւնը, ծեծում էր որդուն:»

Այդպէս նրանք ապրում էին:

Լրացաւ Միհայէլի աասը տարին, հայրը սկսեց իւր հետ աաներ, օգնելու իրեն բեռնակրութեան արհեստում Գնում էր հօրը հետ մինչև Կոլաքաղաքը, լինում էր Սօլօփեցի մենաստանում, նա մանաւանդ սիրում էր միշտ երթեեկել Սպիտակ և Հիւսիսային ծովերը ձկնորսութեան համար: Այսեղ նա իրեն զգում էր ազատ, շուրջը ընդարձակութիւն և հոգին անխռով: Հայրը խորթ մօրը բացակայութեամբ ոչ նախատում և ոչ ծեծում էր որդուն:

II.

Դեռ հանգուցեալ մայրը սկսեց սովորեցնել Միհայէլին գրել կարդալը, որին յիտոյ փոխարինեց գիւղական աիրացուն (Ճյառեկ):

Գրագիտութեանը մանուկը հեշտութեամբ ընտելացաւ: Տիրացուն սկսեց թշլագրել նրան տօն օրերին եկեղեցու երգչաց դասում (ելիրօտ) կարդալու և երգելու: Միհայէլը կարդում էր որոշակի, բարձր և հասկանալի կերպով:

Հասակակիցները նրան նախանձում էին, նրանց

Համար ցաւ էր, որ Միքայէլ Լօմօնօսովը այնպէս
լաւ կարդում էր:

Նրանց բարկութիւնը գալիս էր, երբ նրան
բոլորը գովում էին, իսկ իրենց ոչ Նրանք միշտ
դիմում էին տիրացուին, որպէսզի իրենց ևս թոյլ
տայ դասում կարդալու:

Տիրացուն թօյլադրեց: Եւ ահա մի անգամ,
կիրակի օրը նրանցից մէկը եկաւ մտաւ դասը և
բաց արաւ գիրքը. հէնց ուղում էր սկսել ընթեր-
ցումը, բայց առաջի բառում իսկ գայթեց: Մի բան
անգամ ջոկել չ'կարողացաւ (այ ազ բարձր ու
մօյետ): Այդպէս և ամօթով դուրս եկաւ եկեղե-
ցուց: Միւսը փորձեց, — նոյնպէս չ'կարողացաւ ոչինչ
անել, իսկ երբորդը՝ փորձել անգամ չուզեց: Ընկեր-
ները տեսնելով, որ երբէք չէն կարող հաւասարուել
Միքայէլ Լօմօնօսին, աւելի ևս բարկացան և կա-
տագեցին անմեղ պատանու վրայ. «Ինչո՞ւ Միքայէլը
բոլորից լաւ է կարդում»:

— Տղերք, պէտք է նրան զզզզել, ասաց մէկը:

— Հէնց այդ է մնում, աւեսնում ես, ինչպէս խո-
հական գտնուեց:

— Մի լաւ գանակոծենք նրան տղերք, դարձանա-
մուտ լինենք և կամ թէ չէ հրաւիրենք. նրան ան-
տառ զբօսնելու՝ և այնտեղ մի լաւ ծեծենք:

Երեխ մի այդպիսի վարձադրութիւն նա իւր
ուսման համար չի սպասիլ... հա՛, հա՛, հա՛:

Եւ ընկերները վճռեցին Լօմօնօսովին ծեծել:

Նրանք իսկապէս կատարեցին իրենց խօսքը: Մի
անգամ երեկոյան, երբ Լօմօնօսովը վերադառնում
էր իւր ուսուցչի՝ ախրացուի մօաից տուն. գալիս
էր, բայց չ'գիտէր, թէ ընկերները վիշ են փորել
իրեն համար: Նրանք, որ թուով հինգ էին, յան-
կարծ յարձակուեցին խեղճ պատանու վրայ: Մկրգ-
բում Լօմօնօսովը ուզում էր գիմադրել բայց ինչ
կարող էր անել հնգի դէմ: Այդպիսով մի լաւ ծե-
ծուեց Միքայէլը իւր նախանձու ընկերներից, պատ-
ճառ, թէ ինչու ինքը խեղճի էր բոլորից:

Կոտրուած սրաով վազում է դէպի գէզը, ըի-
թը թագյնում է խոտի մէջ և գառն կերպով լաց
լինում, որ ոչ ոք չ'տեսնէ: Չնայելով իւր սրաի գառ-
նութեան, չմոռացաւ այդ իսկ ըսպէին գիրքը բա-
նալ և իւր միահիմարութիւնը նրա մէջ գանել նա
ընդմիշտ գրքերը իւր մօտ էր պահում, տանը թող-
նել չէր կարող իւր դաժան մօր խստութիւնից
ստիպուած, որը խեղճին ատերով ատում էր, նոյն
իսկ գրքերը տեսնելով, իսկ կարգալու ժամանակ,
նրա վրայ գոռում էր, ասելով. «Ի զուր ժամանակի
կորուստ, քեզ պէս հասակաւոր տղան, փոխանակ
օգնելու հօրը, յիմար ցնորքների յետեկից է ընկեր
ո՛չ, անգործ, ձրիակեր...»:

Բայց անգութ մայրը գրանով չէր բաւակա-
նանում, հէնց որ հայրը յոգնած գալիս էր գործից,
իսկըն և եթ գանդաւում էր և այդպիսով կրկնա-
պատկում Միքայէլի վիշը:

Նա երբէք ծնողների ներկայութեամբ չէր
կարդում. և մինչեւ անգամ ձմեռուայ խիստ սառ-
համանիքի ժամանակ, ինչպէս սովորական է հիւ-
սիսպին ելկրներում, նա բակի մի անկիւնում կուչ
եկած, ձեռքերը փշելով, իւր մասիթարութիւնը
դանում էր անբաժան ընկերի մէջ:

III.

Լօմօնօսովի ստացած կրթութիւնը միակու-
մանի—եկեղեցական էր և իւր մօտ ունեցած զըլ-
քերն էր կրօնական:

Մինչեւ Պետրոս Մեծը Ռուսաստանում աշ-
խարհական, զանազան զիանական զրքեր, զբեթէ
լուրհական, զանազան զիանական զրքեր, զբեթէ
լուրհական, և եղածն էլ գանուում էր մի քանի քա-
չկային, և եղածն էլ գանուում էր մի քանի քա-
չկային կային զպլոցական բարձր հիմ-
նարկութիւններ: Այդպիսով Միքայէլ Վասիլիչը կար-
դալով իւր դաստիարակչի (տիրացու) առաջարկած
բոլոր զրքերը, չկարողացաւ յագուրդ տալ իւր
ուսման խիստ ծարաւին: Խնդրում էր, փափագում
էր, աւելի ևս կարգալ: Տիրացուն միշտ պատաս-
էր, աւելի պատահու եռանդով լի հարցերին:

— Զկայ սիրելիս, այլ ևս չկայ ոչինչ:

— Խնդրի՞ր ուրիշեց, աղաջում եմ—շարունակ
թախանձում էր Լօմօնօսովը:

— Ոչ ոք չունի և ոչինչ, ես նոյնպէս ուրախ կլէ-
նէի խնդրելու, եթէ ունենար որ և իցէ մէկը: Գի-
տես, որ առակը ասում է: Դա ճա առ քայլ, ճա-

ցրչի ու պսկայութեամբ իրանց-
րել եմ տէր հօրը, նա տուեց այն, ինչ որ ունէր:

Բայց մի բան կայ, ես տեսել եմ ծերունի
Դուդինի մօտ երկու լաւ զիրք՝ «Սմօտրիցկի» քե-
րականութիւնը և «Վագնիցկի» թուաբանութիւ-
նը. (Грамматика — Смотрицкаго и ариөметтика—
Магницкаго):

Առաջի գասագրքերն էին Ռուսաստանում,
որոնցով գաս էին տալիս ուսումնարաններում Պետ-
րոս Մեծի ժամանակ: Քերականութիւնը սովորեց-
նում է ուղիղ խօսել և զրելը, իսկ թուաբանու-
թիւնը—հաշուելը:

Միքայէլ Վասիլիչը չափազանց ուրախացաւ,
այնուշետե ևս միշտ յաձտխում էր ծերուկ Դու-
դինի մօտ: Եւ ահա մի անգամ փորձեց խնդրել
զրքերը: Որովհետե Դուդինի որդիքը և նոյն իսկ
ինքը խիստ սիրում էին Լօմօնօսովին, այդ պատ-
ճառով վերջինս համարձակուեց մի անգամ ասել.
«Ընծայիր ինձ քո այն երկու զիրքը, որ ընկած
են իզուր քեզ մօտ»:

— Ինչի՞ս են պէտք նրանք, վերցրու, ասաց Դու-
դինը: Լօմօնօսովի ձեռներն ու ոաները զողացին
ուրախութիւնից, ուրախութիւն, որ սահպեց մո-
ռանալ շնորհակալութիւն յայտնելու իւր բարերա-
րին: Դրքերը կլծքին սեղմած իսկցն վազեց ան-
տառ և ամբողջ օրը զբաղուեց իւր այդ թանկա-
գին ընծայով:

IV.

Տանը երկար սպասեցին Լոմնոսովին. սպասեցին Ճաշին—չկար, ընթրիքին—չկար. նա եկաւ մ.այն այն ժամանակ, երբ բոլորը պառկել էին քնելու: Երկար ժամանակ Միքայելը չկարողացաւ քնել:

Առաւօտեան գարձեալ գրքերն էր միտք բերում, ոչ մի հետաքրքիր բան չի կարող բաժանել, հեռացնել նրան իւր ընկերներից: Բերան էր արել թէ ամբողջ քերականութիւնը և թէ թուարանութիւնը, մտաւորապէս այնքան էր խորասուզուելը որ գիտէր թէ այս ինչ երեսում այս ինչ բառը կայ: Դեռ այդ բաւականութիւն չտուեց նրա մասաղ սրտին, դեռ այդ շատ քիչ է համարում ընդունակ և եռանդալից պատանին, դեռ ձգտում էր աւելի ու աւելի բան սովորել առագայ գիտնականը: Նա ուղում էր իմանալ ի՞նչու է գալիս անձրեւ, որաեղ հն լինում ամպերը ի՞նչից—ձմեռ, ամառ...: Մտածում էր մտածում մտքի մէջ խորասուզուած և ոչ մէկի պատասխանը չիմանալով վերսափն դիմում էր տիրացուին, որը տալիս էր իւր սովորական բացասական ու յուսակառը պատասխանը:

—Չգիտեմ, ես ոչինչ չգիտեմ, միայն մի բան եմ լսել միանգամի այն է, որ Լատիներէն սովորողը կարող է այդ բոլորը իմանալ որովհետեւ այդ լեզով շատ գիտանական ու խելացի գրքեր կան:

Բաւական էր, որ լսեց այս նոր բառերը իսկըն հարցրեց:

—Ի՞նչ ասեցիր դու, Լատիներէն, մի, բայց նրանեղ կարելի է սովորել այդ լեզուն:

—Ո՛, հեռու և հեռու են այսաեղից այդ քաղաքները—սովորում են այդ լեզուն Մոսկուայի «Զաբիկոնոսպասկի» ուսումնարանում և Կիևի առելի բարձր հոգեոր գպրոցում, որ կոչում է Ճեմարան (ակադեմիա):

Ասում են, որ այժմ նոր մայրաքաղաքում—Պետերբուրգում սկսել են սովորեցնել զանազան գիտութիւններ, բայց վերջինիս համար հասաւագիտեմ:

Վերջապէս թէ այս թէ այն, հետաքրքիր չէ քեզ իմանալ, որովհետեւ առաջին՝ որ չափազանց հեռու են մեղանից այդ քաղաքները և երկորդ որ այնտեղի սովորողները լինում են ազնուական ու բարձր գասակարդի որդիք, իսկ գիւղացին ուր, այնտեղ ուր, թողի՛ր այդ մաքերը:

Ոչինչ չասաց Լոմնոսովը, միայն գլուխը ցած թողնելով սկսեց երկար մտածել կալծես մի ելք պէտք է գանէր այդ երջանկութեան ևս արժանանալու. բաւականին մաածելուց յեաց վեր կացաւ և գլուխը խոնարհեցրած դուրս գնաց:

V.

Հոգեմաշ մտածմունքները Մոսկուայի տեղական ուսումնարանի մասին, որտեղ շատ շատերն էին ուսում առնում, Միքայէլին բոլորովին հանգստութիւն չէին տալիս: Այլ ևս սրաով չէր երթեւեկում հօր հետ այն սիրելի վայրերը, ուր միայն գտնում էր իւր հոգու անդորրաւթիւնը, ամենեւին չէին հետաքրքրում իրեն տնտեսական այլ և այլ պիտօքներ, այլ իւր մտածողութեան առարկան Մոսկուայի ուսումնարանն էր: Նարունակ ազօթում էր Աստուծուն, կարծելով թէ այդպիսով կ'իրագործուի իւր բուռն ցանկութիւնները, թէ իւր վերքը բուժելու սպեղանին վաղ թէ ուշ կ'ստանայ տիրոջ տնօրէնութեամբ . . . :

Անցաւ մի ամբողջ տարի այն օրից, բայց այդ մտքերը շարունակ մաշում էին խեղճ պատանու Լոմօնօսովի սիրալ:

Այդ ժամանակ լրացաւ նրա տասնեւից տարին. խորթ մայրը միշտ թափանձում էր ամուսնուն, Միքայէլին ամուսնացնելու համար, ասելով թէ հարկաւոր է մի օգնական բերեր, թէ չէ տան ամբողջ ծանրութիւնը իմ վզին է, որ ինձ տանել գժուար է: Հայրը պակաս ցանկացողը չէր, նա արդէն ընտրել էր մի հարուստ գիւղացու դստեր իւր որդու կնութեան:

Եւ ահա Վասիլը մի անգամ յայտնեց որդուն իւր դիտաւորութիւնը:

Որդին չափազանց գժուհելով պատասխանեց, «Հայր, իմ հոգին չի կարող ընկճուեր, կենակից լինելով այդպիսի կեանքի. ես դեռ կարգալ եմ ուզում, կարգալ և ամեն ինչ իմանալ . . . :

Երկար ու բարակ խօսել չէր կարող 'ի հարկէ, այդ բանը ցանկանում էր հայրը մայրը և խնդիրը կ'վճռուի ըստ նախնի սովորութեան:

Ի՞նչ է մտածում, փոխանակ առաջ գնալու հետզետէ առեւտրի մէջ, ընտրելու օգտաւէտ ձանապարհներ, փոխանակ մտածելու իւր ապագայ ընտանիքի վիճակի բարելաւութեան մասին, մի յիմար բան է գլուխը մացրել այն է կարգալ: Վերջապէս քեզ ով է խանգարում կարգալ ինձ մօտ, սովորի՛ր այն, ինչ որ սովորել են մեր նախնիքը, ուրիշ բան պէտք չէ»: Այդպիսի շատ խրատներ տուեց Վասիլը որդուն:

Որդին լաց էր լինում և լուս:

«Խօսել հարկաւոր չէ նրա հետ—ասաց խորթ մայրը — հարսանիքի պատրաստութիւն տեսնենք, դրան լսել անգամ աւելորդ է»:

Սյդպէս և վճռուեց խնդիրը:

Միայն Միքայէլը արհամարհում էր այդ վճիռը, նրա մտածողութեան առարկան Մոսկուան էր և «Զարկօնօսպասսկի» ուսումնարանը:

VI.

Մի անդամ ձմեռ ժամանակ Պենիսովսկ գիւղից
մարդիկ սայլերով ձուկն էին տանում Մուկուա:

Միքայէլ Վասիլիիւ Լոմնօսովը կանգնած խրձը-
թի տանիքի վրայ, դիառում էր հեռացող կարաւա-
նին և խոր հառաչանք արձակելով սրտի խորբից,
տսում «Երջանի՛կ սայլապաններ, երանի՛ ձեզ, որ
կ'տեսնէք Մոսկուան, իսկ ես...» և նրա աչքերից
դղորուեցին արտասուքի խոշոր կաթիներ: «Ար-
դեռք, կարող եմ ես նրանց հետ ոտով գնար, իսկ
այնտեղ... Աստուած կօգնէ ինձ, այո՛ կօգնէ, Աս-
տուած ողորմած է... արդեռք ի՞նչ կլինի, որ գնամ
նրանց հետ, գնամ խնդրեմ, աղաջեմ, որ ինձ վերց-
նեն...»: Երկու անգամ փորձ փորձեց գնալ բայց
ոչ, գնամ խնդրեմ հօրիցս... ոչ և հանգարտ
քայլերով յետ գարձաւ վերստին իւր տեղը մինչ-
դեռ կարաւանը այդ միջոցին անցայտացաւ հեռու
տարածութեան մէջ, իւր հետ աանելով Լոմնօ-
սովի սիրար:

Ամբողջ օրը կօմնասովը իրեն կողցւած բառում էր, բայց մի միաք շարունակ տանջում էր նրան, այն է հասնել կարաւանին և գնալ Մոսկուա:

Ըսթը իքից յետոց խորթ մայրը սկսեց դարձեալ կօմնուսպի համար ատելի գործի—ամուսնութեան մասին խօսել: Միքայէլը լուռ ու մունջ մտածում էր փախստեան մասին: «Առիթը յաջող

է, ավ դիտէ, երբ կ'պատահի մի ուրիշը, որի հետ
կարելի լինի գնար ոչ, այս անգամ համնել կարա-
ւանին և մի կերպով լինինել Մոսկուա, —շարունակ
այս միտքն էր զբաղեցնում Լօմոնոսովին:

Խորթ մօր և Միքայէլի մտքերը միանգաւամայն
հակառակ էին միմեանց: Մինչդեռ Լօմնկօսովը մա-
զապուրծ լինել էր ցանկանում, ընդհակառակը խորթ
մայրը նոր կարգադրութեան յետեից է ընկած, ու-
զում էր առաւտօտեան, եթէ Աստուած կ'յաջողի,
գնալ ամուսնու հետ միասին հարսնացուին տիս-
նելու: Իրինագեմին էր Միքայէլի ծնողները դուրս
եկան բագը նախիրը տեղաւորելու: Միքայէլը խրձի-
թում միայնակ էր. նայեց նա իւր շուրջը, ոչ ոք
չկար, բացի փոքրիկ քրոջից, որը պառկած անկող-
մնակալում խոր քնի մէջ էր:

Սօտեցաւ գուանը, բաց արաւ և հանեց զրբերը, որոնք վառարանի յետեւ խոր անկիւնում թագցրած էին։ Ետապով վերցրեց մի կտոր սև հաց և զրբերի հետ միասին ամրացրեց կապոցում։ Վերցրեց կախարանից աւելի մաքուր շտպիկը և հագաւ, փաթաթուելով ծածկոցի կապոցը գլխատակին, դրեա և պառկեց քննելու։

Այդ ժամանակ ներս մտան Ճնողները: Խորա-
մանկ Միքայէլը իրեն քնած ձեւցնելով, աչքերը
փափեց և այդպէս սպասեց մինչև կէս զիշելո, իսկ
Ճնողները արդէն վաղուց էին քնել:

Երբ մեռելացին զլութիւնը պատել էր բոլո-



БИБЛІОГРАФІЧНА
ІНСТИТУТА
ДІЯНОСТІ
АКАДЕМІИ
ССР

բին, այդ միջոցին Լօմօնօսովը գլուխը բարձրացնելով ծածկոցի տակից ուշադրութեամբ զննեց, քնիլ են արդեօք բոլորը: Սկզբում թուաց, թէ քնած չեն, վերջապէս վեր կացաւ և սկսեց ունկն գնել. ամենին խաղաղ էր, միայն խորթ մայրը քնի մէջ խռըշ-փացնում էր:

Լօմօնօսովը զգուշութեամբ վերցրեց կապոցը, շշափեց՝ այնահեղ են զլքելը թէ ոչ և երբ համոզուեց ամեն բանի մէջ, աղօթեց պատկերի առաջ և հազիւ լսելի կերպով դուրս եկաւ փողոց:

Երկինքը աստղալից էր, գիշերը խաղաղ ձիւնը ճրթճրթում էր ոտքերի աակ: Միքայէլը երբէք չմտածեց, թէ ի՞նչպէս կարող էր հասնել նրանց: Երկիւդ բոլորովին չեր զգում: ուշադրութեամբ լսելով, որ ոչ մի շշուկ չկայ, շտապով հեռացաւ իւր սիրելի ծննդավայրից:

Յանկարծ նրան թուաց, թէ հայրը փազում է իւր յետեից և այդպէս սիրաը բարախելս շնչառութիւնը վերապահած նստեց տեղը Երկար նստելով ձիւնի վրայ, հազիւ էր կարողանում շարժել ոտներն ու ձեռները մի բոսէ էլ անցաւ թէ չէ, նա իսկոյն բարձրացաւ, նայեց դէպի հայրենի գիւղը և ոչ ոքի չտեսաւ, բայց եթէ մի գիշի (մօյե-վելինեկ) թուփ ձանապարհի մէջ հէնց այդ թփին էր ընդուներ, որպէս հօրը, ճշմարիտ, որ ասում են—մտածեց նա—Երկիւդից մարդու աշքերը մեծանում են, տեսնելմ ես փախից ինչ դուրս եկաւ,

Թուփը հօրս կարծեցիւ: Եւ հանդիստ շարունակեց իւր ձանապարհը:

VII.

Այդպէս Լօմօնօսովը գնաց երկու օր շարունակ: Ուտելու ոչինչ չունէր, բոլորը կերել էր, իսկ կարաւանը դեռ ևս չէր երևում, նա հասաւ նրան 3-րդ օրը, որ 70 վերստ հեռաւորութեան վրայ էր գանեւում հայրենի գիւղից:

Բայց և հասնելը մասսամբ ուրախութիւն չպատճառեց նրան, որովհետեւ սայլապանները խսութեամբ կշաամբում էին յետ դառնալ ծնողների մօտ:

Լօմօնօսովը խոնարհած ծնիների վրայ, դառնութեամբ լալով, աղաչում էր վերցնել մինչեւ Մոսկուա: Նայեցէք եղբայրներ, գուցէ գա աւազակ է, գուցէ մի ինչ որ բան գողացել է հօրից և մեզ մօտ թագնուել է ուզում—ասոաց հանդարտ կերպով սայլապաններից մէկը:

—Եւ Ճմարիտ,—պաշտպանում էին միւսները: տեսնում էք, կապոցում մի ինչ որ բան թագյրել է:

—Աւելի լաւ է հեռացնել նրան, թող դառնայ հօր մօտ:

—Լսում ես --դարձաւ Լօմօնօսովին հրամանառաբր—խումբը չէ կամենումքեզ վերցնել:

Միքայէլ Վասիլիչը շարունակում էր բաց գրլիսով, խոնարհած ծնիների վրայ աղերսել և իւընդրել վերցնելու:

Ոչինչ է քո աղաւանքը.—գոռաց նրա վրայ նիշար, շեկամօրուս զիւղացին։ Յետ գալածի՛ր հօրդ մօտ, մեղանչի՛ր և առւր նորան, ինչ որ դողացել ես:

—Փնարեցէք, հանեցէք ինձ, խնդրում էր Լոմօնօսովը:—Նայեցէք, շատ բարիքներ եմ վերցրել արնից. միայն՝ ի սէր Քրիստոսի, մի՛ հեռացնէք,՝ ի սէր Քրիստոսի, վերցրէք ինձ մինչև Մոսկուտ:

—Եւ ճշմարիտ—ասաց հրամանատարը (պատանուն խղճալով).—Փնարենք նրան. իզուր ինչո՞ւ չարչարենք խեղճին, զուցէ նա իսկապէս սովորելու համար է գալիս Մոսկուտ: Լաւ, քանդի՛ր կապոցզ, ցոյց տուր ինչ որ ունիս. վերջին խօսքելով դիմեց նա Լոմօնօսովին:

Լոմօնօսովը սկսեց քանդել կապոցը, նրա ձեռները գողում էին և երեսի վրայով արտասուրի կաթիներ էին գլորւում:

Գիւղացիները շըջապատելով նրան հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ինչ կ'լինի Միքայէլ պահեստը:

—Ահա նայեցէք: Զայրացած գոռում էր Լոմօնօսովը, առէք, նայեցէք,—և հանեց թաշկինակից իւր հնացած գրքերը: Դրանք ընթերցողին յայտնի դասագրքերն էին—«Սմօտրիցկի» քերականութիւն: «Մագնիցկի» թուաբանութիւնը:

—Նայեցէք,—ասաց ու թօթափից թաշկինակը: Թաշկինակում աւելի ոչինչ չկար:

Հրամանատարը վերցրեց այդ երկու գիւղը, թերթեց նրանց, կասկածելով, որ կարող էր փող թագորած լինել մէջը, բայց ոչինչ չգտաւ:

—Եւ ճշմարիտ, եղբայրներ, ասաց նա. պատանին իսկապէս սովորելու է գնում: Ահաւասիկ նայեցէք, թէ ինչպիսի գանձ է տանում Մոսկուա հայրենական անից:

Հրամանատարը քրքջաց և բարձրացրեց գրքերը խմբին ցոյց տալու Գիւղացիները նցնպէս ծիծաղեցին:

—Այժմ ի՞նչ ունիք ասելու եղբայրներ, արդիօք վերցնենք սորան մինչև Մոսկուա,

—Ի՞նչ անենք,—թող դայ, ենթադրենք թէ դա մեր խմբի մի անդամն է:

Լոմօնօսովը իրեն կորցրեց ուրախութիւնից: Նա խոնարհեց և շնորհակալութիւն մատուցեց թէ հրամանատարին և թէ խմբին:

—Ամրացրու շուտով գրիերդ—քո գանձը, տեսանը թէ ինչպէս կարաւանը կանգնեց այսքան ժամանակ քեզ համար:

Միքայէլ Վասիլիչը շտապով վերցրեց գրքերը, փաթաթեց թաշկինակում և ուրախ ուրախ քայլեց կարաւանի հետ միասին:

VIII.

Մինչև Մոսկուա հասնելը տեսեց երեք շաբաթ: Շատ էր մտածում օտարական Լոմօնօսովը այդ երեք շաբթուան ընթացքում նա մտածում էր և

Հօր և մօր մասին, մտածում էր նոյնպէս իւր բարի ուսուցի — տիրացուի մասին, նա մտածում էր թէ ինչպէս սքանչանում էր միանդամ իւր ուսուցիչը և ամբողջ գիւղը իւր յառաջադիմութեան համար, իսկ այժմ բոլորն էլ ափսոսում են թէ ինչու ես փախայ...: Մտքերը ինձ աեղափոխեցին գիւղից Մոսկուա, մտածեցի քանի որ այնտեղ — մայրաքաղաքում չկայ ոչ մի ազգական, ի՞նչպէս կարող եմ ապրել: Գոնէ, եթէ ունենայի մի ծանօթ, ամեն բան ինձ այսպէս զարհուրելի չէին թուալ գոնէ չէի վախենալ սովոր մեռնելու. իսկ այժմ...: Թախիծը տիրեց Լոմնոսովի հոգու վրայ. այնքան տիրութիւն էր տիրել սրտին, որ պատրաստ էր յետ դառնալ:

Կարաւանը շարունակ առաջ էր գնում, որի հետ և Լոմնոսովը, յետ գառնալը արդէն ուշ էր: Բայց նա ի՞նչ է թողել յետելը, ի՞նչ է նրան սպասում տանը, ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ խորթ մայրը իւր անընդհատ հայհցանքներով և հայրը իւր ձանձրացուցիչ խօսակցութեամբ ամուսնութեան մասին...: Այդպէս Լոմնոսովը ամբողջ ձանապարհորդութեան ժամանակ մտքով սլանում էր գիւղից Մոսկուա և Մոսկուայից գիւղը:

Արդէն հեռուից երեսում էին Մոսկուայի եկեղեցիների գմբէթները. Մայլապանները տեսնելով գլխարկները վերցրին և ջերմեռանդութեամբ խաչ հանեցին երեսներին, որոնց հետեւ և Լոմնոսովը:

Նրա սիրտը այնպէս բարախում էր, որ կարծես թէ մի բան ահ էր պատճառում իրեն:

Կարաւանը ուղղուեց գեպի «ձկների փաճառատեղին» (Քինայի քած): Մինչև այդ փաճառատեղին բաւականին ձանապարհ պէտք է կարէին, այնպէս որ հարկաւոր էր անցնել ամբողջ քաղաքի միջով: Միքայէլ Լոմնոսովը անդադար նայում էր շուրջը, սքանչանում, ահսնելով բաղաքի աները և քարեայ եկեղեցիների ոսկեզօծ կատարները....:

Արդէն մոլթն էր, երբ կարաւանը հասաւ նշանակեալ տեղը: Մայլապանները թոյլ տուին Լոմնոսովին քննելու սայրի մէջ: Վերջինս փաթաթուեց մուշտակի մէջ և քննեց ամբողջ գիշերը. զարթնեց վաղ առաւօտեան, երբ գետ բոլորը բնած էին:

Զարթնեց և կրկին յիշեց, որ ինքը այնտեղ մենակ է, բոլորին օտար. ոչ ոք չ'գիտէր նրա մտադրութիւնը: Յուղուած էր պատանին և յուղումը որպէս մի ծանր քար Ճնշում էր նրա սիրար:

Քաղաքի միջնաբերդում զօղանջեց զանգի ձայնը, սկսուել էր առաւօտեան ժամերգութիւնը: Լոմնոսովը ջերմեռանդութեամբ խաչ հանեց երեսին, ծունկն զրեց և սկսեց Աստծուն աղաչել ու խնդրել պաշտպանութիւն և օգնութիւն:

IX.

Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, ահագին բազմութիւն ժողովուեց կարաւանի մօտ ձուկն

գնելու։ Լօմօնօսովը լուռ կանգնած մի կողմում՝
անհամբեր սպասում էր, արդեօք հրամանատարը
կ'իօսէ իւր մասին մէկի հետ։

Սրդէն բոլոր գնողները պահանջում էին սայ-
լապաններից ձուկը, հարցնում էին գինը, ձկան ինչ-
պիսի լինելը և այլն և այլն, իսկ իւր մասին և ոչ
մի իօսք։

—Աւս, ի՞նչ անել—մտածում էր պատանին հա-
ռաջանք արձակելով։ —Միթէ ևս հեռացայ հայրե-
նական տնից, տանջուեցի այստեղ գալու համար,
որ այսպէս պարապ սարապ կ'անգնեմ սայլի մօտ,
միթէ այս մտադրութեամբ եկայ այս նուիրական
ու ինձ համար պաշտելի վայրը։

Սաաց Լօմօնօսովը և խելագարի պէս դիմեց
դէպի այս, դէպի այն գնողին. բայց ի՞նչ, բոլորն էր
արհամարհելով երես էին դարձնում, կարծելով թէ
ողորմութիւն է ինդրում այդ փոքրիկ տղքառը
Խեղճը միշա լուռմ էր այս յուսակտուր պատաս-
խանը. «Կորի՛ր հեռու, ի՞նչ ես լիզում...»

Վերջն յուսահատ րոպէները համարելով Մի-
քայէլը այդ ժամանակամիջոցը, աւելի էր խրախու-
սում իւր գործից և աղաջելով ու պաղատելով ձիգ
էր թափում մէկից դրական պատասխան ստանա-
լու, որի միջոցին սիրաը սաստիկ արոփում էր, ար-
ձակելով հոգեմաշ հառաջանքներ։ Ոմանք մօտենում,
հարցնում էին պատանու զրութիւնը, որ կարծես
դարման պէտք է տային ողորմելուն, որոնք փոխա-

նակ քաջալերելու պատանու եռանդը, դեռ աւելի
ևս խափանում էին նրա ունեցած վառ յոյսերը,
վերագրելով այդ դժբաղդութիւնը նրա դործած
յանցանքին. թէ ի՞նչու է եկել առանց ծնողների
օրհնութիւնը ստանալու, ահա և զրա համար Աս-
տուած պատժել է իրան։

Ի՞նչ անեմ, ի՞նչպէս կ'լինի վիճակս... ասում
էր Միքայէլը։ Նատ արցունք թափեց այդ օրը Մի-
քայէլ վասիլելը բայց իզուր, զրանով չէր կարող
բարւոքել իւր զրութիւնը։ Ելիքայում է, ի՞նչ ա-
նել, ում դիմելը

Հէնց այդ ժամանակ կարաւանին մօտեցաւ մի
ալեղարդ ծերունի, որը ազնուական և հարուստ
ընտանիքից էր։ Լօմօնօսովը գիմեց նրան. ծերու-
նին համբերութեամբ լսում էր պատանուն, որին
և ասաց. «Ես ինքս Միքանգելով երկրիցն եմ, նշա-
նակում է գու իմ երկրացի ես, թէպէտե լաւ չէ,
որ գու փախել ես հայրենական տնից, բայց յամե-
նայն դէպս հարկաւոր է քեզ օգնել, իբրև հայրե-
նակցի, ուրեմն գնանք միասին մեր տան գիշերելու
և այնաեղ կ'որոշուի քո վիճակը։

Զափազանց ուրախացաւ Լօմօնօսովը, որ պա-
տահէլ էր մի հայրենակցի, այնպէս որ լսելուն պէս
ուրախ, ժպիաը երեսին յետեկց նրան։

Միւս օրը «Զահիկօնօսպասսկի» մենաստանից
մի արեղայ եկաւ սայլապանների մօտ ձուկն գնե-
լու։ Հրամանատարը, որ միշտ պաշտպան էր հան-

դիսացել պատանուն, խօսեց արեղայի հետ նրա
մասին. պատմեց թէ ինչպէս մի պատանի Արխան-
գելսկ նահանգից եկել է Մոսկուա, թէ նա ինչ-
պիսի եռանդ ունի դէպի ուսումը:

Արեղան լսելուն պէս, հրամայեց իւր մօտ բե-
րել փախստականին: Պէտք է ասեր, որ մինչեւ Պետրոս
Մեծը, Ռուսաստանում գլուխ թէ ուսումնական մարդիկ
հոգեոր դասից էին. նրանք և դրում էին զանա-
զան գրքեր և սովորեցնում էին ուսումնարաննե-
րում. (այդ ժամանակ բոլոր դպրոցները հոգեոր
էին): Միայն Պետրոս Մեծի ժամանակ բացուեցան
աշխարհական դպրոցներ: Առաջին դպրոցը նո հիմ-
նեց Մոսկուայի Սուխարևսկ աշտարակում (ճառայ).
«Թուանշանական» (Ամֆիրոօ) անունով: Իսկ հո-
գեոր բարձրագոյն դպրոցը դարձեալ նոյն Զարկօ-
նոսպասսկին» էր, որը գտնում էր նոյն մենաստա-
նում—Նիկոլայի փողոցում:

Միւս օրը հրամանտարը այնտեղ տարաւ Լո-
մոնոսովին: Արեղան ընդունեց նրան իրեւ աշա-
կերա յիշեալ դպրոցում:

X.

Խօլմօգորսկի ձկնորսը—Արխանգելսկ նահանգի
փախստական գիւղացին, որին այդպէս ծաղրում
էին, հասաւ վերջապէս իւր նպատակին: Նա այժմ
նստած է «Զարկօնոսպասսկի» ուսումնարանի մի
դասարանում Բոլոր աշակերտները իւր վերաբեր-

մամբ փոքր լինելովի ծիծաղում և ծաղրում էին.
«Ո՞չ, ինչպէս մեծ է և այս հասակով եկել է սո-
վորելու»:

— Ե՞շէ, այսպիսի աշագին ախմախը բարձր հա-
սակով լստիներէն սովորել է ուզում—գոռում էին
նորա ականջին: Լոմոնոսովը բոլորը համբերու-
թեամբ տանում էր. աշխատում էր չ'լսեր որի հա-
մար աչքերը յառում էր զրբին, փակում էր ականջ-
ները և կարգում: Նա առաւոտուանից մինչև երե-
կոյ տքնում և փափագում էր շուառվ այդ լեզուն
սովորել: Նա մատածում էր.—Հենց որ լստիներէնը
սովորեմ, կ'նշանակէ թէ ամեն ինչ գիտեմ...: Ու-
րեմն ես այն ժամանակ կ'իմանամ թէ հրտեղից է
ցօղը և որտեղից անձրեւ:

Պատրստաս էր բոլորին համբերել միայն թէ
շատ բան սովորել: Համբերում էր և քաղցի և
չքառորութեան: Նա ապրելու համար ստանում էր
գանձարանից օրեկան երեք կոպէկ: Իւրաքանչիւր
օր մախում էր մի կոպէկ հացի, մի կոպէկ թթուա-
ծրի (ԿՎԱԾ), իսկ մնացածները գործադրում էր
թղթի, գրքի և կօշկի: Լինում էր ժամանակ, որ
քաղցածանում էր և սաստիկ յրտութիւնից մրսում
Բայց երկու տարուայ ընթացքում եռանդալից պա-
տանին իւր չափազանց ընդունակութեամբ դասա-
րանի բոլոր աշակերտներից աւելի լաւ իւրացրեց
լստիներէնը, այնչափ, որ մինչև անդամ կարողա-
ցաւ այդ լեզուով գրել փոքրիկ երգեր, ոտանաւոր-

ների Այդ ժամանակներում հարկադրում էին բոլոր
աշակերտներին գրել ոտանաւորներ և մեղապար-
տին բանդարկելով ստիպում էին այդ պարագը կա-
տարել Մեծ տօներին պահանջում էին գրել շնոր-
հաւորական ոտանաւորներ, ուղղած կամ վարչու-
թեան կամ ծնողներին, բայց չդիտեին թէ ինչպիսի
առանձին ձիւք պէտք է ունենալ ոտանաւորներ
գրելու:

Այդպէս բոլոր աշակերտներն գրում էին, գրում
էր և Լօմօնօսովը. գրում էր և՝ լատիներէն և՝ ռռւ-
սերէն Ոտանաւորները, հասկանալի է, դուրս էին
գալիս վատ:

Ասում էին Ճանճերը

Մեղրային Հոգիները

Թռչում էին և նստում

Ուրախութեան մէջ երգումն:

Ահա թէ ինչպիսի ոտանաւորներ էր գրում
Լօմօնօսովը ուսումնարանում:

XI.

Նա բոլոր աշակերտներից ամենաաշխատասէրն
էր: Պատահում էր, երբ բոլոր աշակերտները բակ
էին գնում խաղալու, վազգվելու, իսկ Լօմօնօսովը
միշտ նստած գրադարանում կարդում էր (այդպէս
էր կոչում այն տեղը, որտեղ զետեղուած էին
գլուխը):

Լօմօնօսովը շատ գիւք էր կարդացել, այժմ

էլ արդէն լատիներէնը գիտէր, բայց իրեն հետաքր-
քիր հարցերի պատասխաններն գեռչէր գտել «Որ-
տեղից էր լինում անձրել և որտեղից—ամպերը»:
Տեսնում էր Լօմօնօսովը, որ իւր ուսուցչի—տիրա-
ցուի կարծիքը լատիներէնի մասին՝ սխալ էր: Եթէ
իմանաս լատիներէնը, ասում էր նա,—բոլորը կ'ի-
մանաս: Ահա այժմ գիտեմ լատիներէնը—մատծում
էր Լօմօնօսովը—բայց ինքս ուսնում էմ, որ շատ
բան գեռ չգիտեմ:

Մի անգամ նա գլուխարանում գտաւ մի հնա-
ցած գրքոյի, որի մէջ գրուած էր տաքութեան և
ցրտութեան մասին: Ասուած էր, որ իւրաքանչիւր
առարկայ տաքութիւնից լայնանում, առգում է,
իսկ ցրտութիւնից սեղմեռում Վերցնենք օրինակի
համար խրճիթի դուռը, որի տախտակները ամառը
իրար մօտենալով, իտանում են, իսկ ձմեռը ընդ-
հակառակը՝ հեռանալով իրարից կազմում են ձեղ-
քեր. ինչու է այդպէս—բոլորը նրանից է, որ ձմե-
ռուայ ցրտից դուռը սեղմեռում է:

Այդ և այդպիսի շատ հետաքրքիր հարցեր էր
շօշափուած այդ գրքոյիում: Գիրքը կոչում էր
բնագիտութիւն (Փազակա):

Լօմօնօսովը ուրախանալով կարդաց ամբողջ
գիրքը սկզբից մինչև վերջը: Այդ գրքով նա իմացաւ,
որ կան շատ գիտութիւններ, տեսաւ որ «Զարկօ-
նօսպասսկի», ուսումնարանում այդ գիտութիւննե-
րից և ոչ մէկը չէին սովորեցնում:

Այնուշեաւ նրա հետաքրքրութիւնը աւելի զարթնեց, այնպէս որ միշտ հարցնում էր ուսուցիչներին, թէ արդեօք այդ գիտութիւնները ուրտեղ կարելի է սովորել: Նրան ցցց տուին Կիւի հոգեոր Ճեմարանը: Նա աւելի բարձր էր համարւում Մոսկուայի «Զարկօնօսպասսպի» ուսումնարանից: Լօմոնոսովիր ձգտեց այդ երջանկութեան ևս արժանանալ:

Ուսումնարանի վարչութիւնը ճանաչում էր նրան իրեւ ամենաաշխատասէր աշակերտի, նու որոշվեց մի տարի ժամանակով նորան Կիւի Ճեմարանը ուղարկել: Լօմոնոսովիր գնաց Կիւ գիտութիւն ստանալու: Բայց այնաեղ ևս չ'գտաւ իւր փնտռածը: Այնտեղ սովորում էին միայն հոգեոր առարկաներ. բնագիտութիւն և ուրիշ սրա նման առարկաներ չեին դասաւանդում:

Այնտեղ պատրաստում էին քարողիչներ, եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ: Գիտնականներ չեին պատրաստում, որոնցից Ռուսաստանում չ'կար և ոչ մի անհատ: Լօմոնոսովիր դժգոհ մնաց գարձեալ և Ճեմարանից, փոխանոտ դասարան յաճախելու, գլուխարանում էր զբաղւում Բայց և այսաեղ կային միայն հոգեոր գրքեր, ինչպէս Ս. Հարց գրուածները և նոցա կենսագրութիւնները: Լօմոնոսովիր կարդաց այն բոլորը, ինչ որ իրեն համար նոր էր և անբաւական վերադարձաւ Մոսկուա:

XII.

Այլ ևս Զարկօնօսպասսպի գպրոցում կարդալը աւելորդ էր Լօմոնոսովի համար, քանի որ ձեռք է քերել այն բոլորը, ինչ որ տալիս են այնտեղ: Այժմ մնում էր նրան գուլու գալ դպրոցից, ամուսնանալ և քահանայ ձեռնադրուել, մանաւանդ որ ժողովրդից տեղ էլ էր առաջարկւում: Բայց Լօմոնոսովիր ուզում էր դեռ ևս կարդալ Դէպքը օգնեց նրան:

Պետրոս Մեծը իւր կենդանութեան ժամանակ հիմնեց Պետերբուրգում աշխարհական բարձր դպրոց, որ կոչում էր գիտառութեանց Ճեմարան» (Ակադեմիա Խայկ): Այդ Ճեմարանը բացուեց աւելի ուշ — Պետրոս Մեծի մահուանից յետոյ, նորա կիւն Եկատերինա Լի օրով:

«Գիտառութեանց Ճեմարանի» նպատակն էր պատրաստել Ռուս գիտնականներ, այգտեղի դասաւանդող պրօֆեսորները հրաւիրուած էին Գիրմանիայից:

Պետերբուրգ եկան շատ Գիրմանացի գիտնականներ, բայց չկար և ոչ մի աշակերտ: Արդէն այդ Ճեմարան մտնողները պէտք է գրագէտ լինէին, բայց որտեղից Ճարել այդպիսիները Ռուսաստանում այդ ժամանակ, քանի որ չկար ոչ գիմնազիա և ոչ մի այլ դպրոց:

Հրամանագրեցին Մոսկուայի «Զարկօնօսպաս-

սկի», դպրոցին ուղարկել ընդունակ աշակերտներին Ճեմարանում սովորելու:

Ընտրուած տասնեւերկու ամենալաւ աշակերտների թւուժն էր նաև Արխանգելսկ գիւղացին — Լօմօնօսովը, որը շուտով ուղարկուեց Պետերբուրգի իւր ընկերների հետ միասին:

Ճեմարանում Գերմանացիները ոչ միայն սովորեցնում, այլ և հոգում էին նրանց տնտեսապէս, պէտք է և սովորեցնէին և՝ կերակրէին և՝ թէ միւնցն ժամանակ հսկէին ուսանողների վրայ: Բայց այդ բոլորը կատարում էին շատ թոյլ կերպով, այնպէս որ անհոգ էին վերաբերում դէպի նրանց գործած անվայել գործողութիւններ՝ արքեցողութիւնը, շռայլութիւնը և զեղին կեանքը: Միւնցն բանը գուցէ պատահում էր Լօմօնօսովի հետ: Բայց ահա շուտով փայլուն վիճակի ենթարկուեց Լօմօնօսովը: Կառավարութեան հրամանով պէտք է ընտրէին աշակերտներից երեք ամենալաւանչաւ — Լօմօնօսովին, Վինօգրադովին և Ռէզերին արտասահման ուղարկելու, որոնք աշնանը ուղևորուեցին: Պետերբուրգից:

Սրգեօք, Լօմօնօսովը մատածում էր այդպիսի վիճակի մասին, երբ փախչում էր կարաւանի հետ Հայրենական անից — ի հարկէ ոչ

Նա այդ ժամանակ գեռ չփխաէր թէ ծովի հետև բարձր դպրոցներ կային (այդպէս էին կոչում Գերմանիային). Ո՞րքան բախտաւոր էր զգում նա

իրեն այժմ որ վերջապէս կատարուեցին և կատարւում են իւր փայլուն իղձերը:

Նրանք գնացին ծովային ճանապարհով, որտեղ սաստիկ փոթորկից նաւը հազիւ աղատուեց խորտակուելուց: Մի կերպ աղատուելով Ռուսաց ջահել ուսանողները հասան գերմանիայի Մարբուրգ քաղաքը:

XIII.

Մարբուրգում համալսարան կար (բարձրագյն դպրոց), որտեղ Վոլֆ անունով մի պրօֆեսորի հսկողութեան տակ մասն ուսւ ուսանողները: Լօմօնօսովը այստեղ սկսեց եռանդով սովորել Գերմանիային լեզուն և շատ շուտով տիրապետեց, այնպէս որ սկսեց կարգալ գերմանիային զրքեր, մասնաւոնդ սիրում էր կարգալ գերմանացի հեղինակ Գիւնտերի ոտանաւորները և ինքը ոտանաւորներ զրքելու ժամանակ աշխատում էր նմանել նրան: միանդամ զրեց մի մեծ ոտանաւոր այսպիսի վերնապավագը: «Խատինի նուածման մասին»:

Եցդ ժամանակ Աննա իւանովնա թագուհին պատերազմ էր փարում տաճկոց հետ և յաղթելով նոցա նուածեց Խատինը: գորա համար էլ Լօմօնօսովը իւր ոտանաւորը կոչեց «Խատինի նուածման մասին»:

Իւր մի շարք գրուած ոտանաւորները ուղարկեց Պետերբուրգ Գիւնտերի ուղարկած Ճեմարանը, որոնց

մատուցին թագուհում, նա հրամայեց շուտով տպագրել և տարածել պալատականների մէջ։ Գրուածքը հիացրեց բոլորին։ Այլ կերպ չէր կարող լինել, այդպիսի նկրդաշնակ ոտանաւորներ Լօմօնօսովից առաջ ոչ ոք չէր գրել, նա էր, որ առաջին անգամ ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է գրել ոտանաւորը։ Շատ բան սովորեց Լօմօնօսովը Մարթուրդի համալսարանում, իմացաւ այն բոլորը, ինչ որ ցանկանում էր վազուց, 'ի միջի այլոց սովորեց նոյնպէս բժշկական արուեստը։ Սովորածները կատարելազորներու և աւելի նոր բան սովորելու համար նա այցելեց Գերմանիայի այլ և այլ քաղաքներ։ Ճեռք բերեց նորանոր գիտութիւններ, որոնք են լեռնային գործեր, մեքենագործութիւն, ներկեր պատրաստելը... և այլն։

Բայց արտասահմանում ևս Լօմօնօսովը ապրում էր շատ աղքատ, որովհետեւ Պետերբուրգից քիչ փող էին ուղարկում, այն էլ ոչ իւր ժամանակին և լրիւ, մինչև անգամ պատահում էր, որ միսներով ոչինչ չէին ուղարկում։

Դժուար էր ամուրիի համար այդպէս ապրելը, մտածեց ամուսնանալ և ամուսնացաւ մի գերձակի աղջկայ հետ, որի սենեակում և բնակուեց նա։

Շուտով Լօմօնօսովը մի որդի ունեցաւ, մլրճ տութեան և այլ և այլ ծախսերի համար պարտքի տակ ընկաւ։ Պարտատէրերը սկսեցին պահանջել իրենց պարագը, բայց որտեղից տար

Լօմօնօսովը, քանի որ ոչինչ չունէր, բանն այնտեղ հասաւ, որ միանգամ սպառնացին խեղջին բանտ դնել։

Լօմօնօսովը վախենալով այդ սպառնալիքներից վճռեց փախչել Ռուսաստան, և գիշերը երբ բոլորը քնել էին, Լօմօնօսովը կողջն իսկ չասելով հեռացաւ Մարթուրդից։ Կինը իմացաւ այդ բանը յաջորդ օրը։

XIV.

Գերմանիայի սահմանը բաւականին հեռու լինելով, Լօմօնօսովը չ'կարողացաւ անցնել այդ տարածութիւնը կարճ ժամանակում, նա զիսաւորապէս գնում էր զիշերը, իսկ ցերեկը թագ էր կենում անցորդի չ'հանդիպելու համար։

Երրորդ օրն էր, որ փախստականը սաստիկ տառապում էր քաղցածութիւնից, այլ ևս ոյժ չունենալով առաջ ընթանալու. վճռեց գիշերել առաջին գիւղում, այդ պատճառով իւր գնացքը փոխեց և դիմեց գէպի պանդոկի դուռը։

Ներս է մանում և ինչ տեսնում բազմաթիւ ժողովուրդ, այստեղ, այնտեղ արթեցովներ են աղայակում, երգեր երգում և այլն և այլն։ Սեղանի վրայ դրած էր օղի, իսկ նրա հետեւ մի պրուսական սպայ երկար բեխերով. վերջինս տեսնելով Լօմօնօսովին, հրաւիրում է խմբի մէջ։

Խնդրում ենք, արի՛ և աղուհաց կեր մեզ հետ

Լօմօնօսովը սկզբում վախենում էր և մինչդեռ ուզում էր փախչել, բայց տեսնում էր, որ արքեցողների խմբից իզուր է վախենալ, մօտենում է և ողջունում, սպան յարգելով նրան օղիով, առաջարկում է ուտել:

Միքայել Վասիլիչը չափազանց ուրախացաւ, որովհետև նա արդէն մեռնում էր քաղցածութիւնից, իսկ այժմ ոչ միայն հաց գտաւ ուտելու, այլ և օղի:

Սպան այս և այն էր առաջարկում, մանաւանդ օղի, Միքայել Վասիլիչը զարմանում է միանգամայն, այնքան է խմում, որ հարբում և ուժից ընկնում է, և տեսնում է, որ սպան ոչինչ չխմելով միայն սրան նրան էր խմեցնում:

Սաստիկ հարբեց Լօմօնօսովը, լեզուն չեր հասկացւում, թոթովում էր, որպէս մանուկ, զլուխը խոնարհեցնում սեղանին...: Հէնց այդ ժամանակ սպան տալիս է նրան մի թուղթ և ստիպում ստրագել. նա ստորագրում է այն, ինչ որ ասում են նրան, բայց ինքն իսկ չգիտէր թէ ինչ էր զբածը:

Սպայի հրամանով մի զինուոր վագեց Լօմօնօսովի մօտ ածիլիով և ածիլեց նրան ծոծրակը. բայց Լօմօնօսովը ոչինչ չզգաց, զլուխը սեղանի վրայ դնելով խոր քնի մէջ մտաւ:

XV.

Լօմօնօսովը զարթնելով միւս օրը տեսնում է զլուխը ածիլած:

Ինչու այս խարդախնելը ինձ օղիով արքեցրին, ասում է նա, ցանկացել են վերցնել ինձ, իբրև նորմնտիր զինուոր Մարգիկ որսալով արքունական ծառայութեանը չեն գնալ—ուրեմն նրանք օղիով են ուզում զրաւել. այս գերմանացիներ:

Լօմօնօսովը չէր իմանում, որ Պրուսիայի Ֆրեդրիկոս I թագաւորը շատ էր սիրում բարձրահասակ զինուորներին, այդ պատճառով այդպիսիներին փնտում էին ամեն աեղ: Լօմօնօսովը բարձրահասակ էր, դորա համար էլ նորան խաբեցին:

Ոչ եղացը, այդպէս չե կարելի, գոռաց Լօմօնօսովը սպայի վրայ,—միթէ խորամանկութեամբ կարելի է մարդ որսալ:

Լոի՛ր, բարկացաւ նրա վրայ սպան, տպա թէ ոչ կեչի վլաւի համը կիմանաս:

Բայց Լօմօնօսովը իրեն զսպել չկալողացաւ: Միթէ յիրաւի նա զինուոր պէտք է լինի, այն էլ օտար երկրում: Նա շարունակում էր դոռար, հայհոյում էր զինուորներին, սպային և բոլոր գերմանացիներին:

—Վախտմայստէր,—ասաց սպան, ծեծի՛ր նորեկին, թէ չէ բարութեամբ նրան չես կարող հնազանգեցնել:

Վախտմայստէրը շուտով կատարեց սպայի հրամանը և ձիպոտը սկսեց խաղայ պրուսական զինուոր Լօմօնօսովի մէջքին:

Ճար չկար—մնում էր միայն լոել Բայց զինուոր Լօմօնօսովը՝ ի հարկէ չէր կարող հաշտուել իւր վիճակի հետ: Ցրտից խեղջի մարմինը կապտել էր (մօրօթ քրօն քրօն ու հետո ու տելու.)

Տիրեց խաւարը:

Սպան վախինալով, որ նորեկը կ'փախչի, հրամայեց առանել Վեզել ամրոցը:

Լօմօնօսովին տարան բերդը և նշանակեցին նրա մօտ առանձին պահապան:

Նա միայնակ ֆնալով պահապանների հետ, խօսում է. ի՞նչու էք ինձ հսկողութեան տակ տռել մի՞թէ փատ է ձեր թագաւորին արած ծառայութիւնը: Այն ժամանակ ես արգած էի, դժգոհութեամբ էի յայտնում, մինչդեռ այժմ երբ զարթնել եմ չափազանց ուրախ եմ, որ այս ծառայութեան մէջ ընկայ:

Պահապանները առաջ չ'հաւատացին, բայց յետոյ տեսնելով, որ նորընտիրը իրեն հանդիսա, ուրախ է զգում, երգեր է երգում, թողեցին նրան խստութեամբ հսկելը և մինչեւ անգամ թշլաղեցին բազը գուրս գալ:

Լօմօնօսովը ման էր գալիս բազում ուրախ կերպով, խօսում, ծիծաղում էր պահապանների հետ և միւնցին ժամանակ շարունակ նայում շըլու:

Ճապարսպի միջի լայն խրամին, որը բռնում էր ամբողջ ամրոցի շուրջը, լեքն էր ծայրէ 'ի ծայր ջրով, մի խօսքով կատարեալ գետի նման:

Այդպէս անցաւ մի օր ևս, պահապանները բոլորովին չէին հսկում Լօմօնօսովին, նրան հէնց այդ էր հարկաւոր Գիշերը, երբ բոլորը անխռով քնած էին, նա մազլցեց պատուհանի վրայով որը հետեւից դրան դէմ էր. պատուհանից աղատ կերպով ձգուեց ամրոցի պատի վրայ: Ուշագրութեամբ լսեց.—ամեն ինչ հանգարտ էր, բոլորը քնած էին: Զգուշութեամբ սողաց դէպի խրամը, իսկ այնաեղ խաչակինքելով նետուեց ջրի մէջ և լողալով հասաւ միւս ափը: Չնայելով որ ցուրտ էր, հագուստը թաց և պահապանները իմանալով փախուստը, հետեւից արձակում էին, բայց և այնպէս Լօմօնօսովը իւր բոլոր կարողութեամբ սկսեց փախչել:

Ամրոցի պատի վրայից շարունակ արձակում էին, մէկ, երկու, մէկ, երկու... այդպէս լսում էր Լօմօնօսովը և վազում աւելի արագ, բայց նրա հետեւից մարդ էր ուղարկուած. նա հեռում էր շատ վազելուց: Ձիերի սմբակների տրոփիւնը պարզ հասնում էր նրա ականջներին. մի րոպէ էր մնացել, որ նրան բռնէին:

Լօմօնօսովի շունչը կարւում էր երկիւղից և յոգնածութիւնից ոտները թուլանում էին, քայլերը դանդաղում, խոնարհում են ծնկները և Լօմօնօսովը ուժասպառ ընկնում է գետնին:

Բայց նա կարողացաւ հասնել սահմանին, ալ-
դէն Պրուսական հողի վրայ չէր, ոտնելը ազատե-
ցին նրան Գերմանացոց աշխատթեան զինուորական
ծառայութիւնից:

XVI.

Նախ քան Պետերբուրգ ընկնելը Լօմօնօսովը
աջքի առաջ ունեցաւ բոլոր ձախորդութիւնները:

Պետերբուրգ հասնելով, նա ուղղակի գնաց
Ճեմարան, ներկայացրեց Ճեմարանի վարչութեան
իւր վկայականը, որը ձեռք էր բերել արտասահ-
մանի համալսարանում: Վկայականում ասուած էր,
որ Միքայէլ Լօմօնօսովը մեծ յաջողութիւն է ու-
նեցել զանազան գիտութիւնների մէջ. նա այժմ
շատ գիտութիւնների տեղեակ է: Ոչ մի Ռուսա-
անցի չ' գիտէր նոյն ժամանակ այնքան, որքան գի-
տէր այդ ժամանակուայ Խօլմօդորսկի ձինորս Լօ-
մօնօսովը:

Գերմանացիները որ գիտութեանց Ճեմարա-
նին իրեւ կաւագարիչ էին հանդիսացել, չուզեցան
Լօմօնօսովին ընդունել պրօֆեսորի պաշտօնով. նը-
րանք անբարեացակամ էին վերաբերւում գէպի
Ռուս ուսումնականը: Երկար սովասելուց պատաս-
խան չ' ստանալով, բողոքեց Ելիզաւեա թագուհուն,
որը Պետրոս Մհծի դուստրն էր և նա հրամայում
է իսկոյն վերցնել նրան պրօֆեսորների թւում:

Մինչեւ Լօմօնօսովը, այդ Ճեմարանի պրօֆե-

սորները Գերմանացիներ լինելով, որոնք գլութէ
չ' մանալով Ռուսաց լեզուն, զրկում էին ուսանող-
ներին իրենց տգիտութեամբ մայրէնի լեզուից—
ուղիղ խօսելուց և գրելուց: Լօմօնօսովը էր աչա,
որ հողաց այդ մասին. նա գրեց մայրէնի լեզուով
քերականութիւն, որը ձեռնարկ ծառայեց երկար
ժամանակ ռուսներին. զրեց նաև Ռուսաց պատ-
մութիւնը, որ մինչեւ այդ ժամանակ ռուսները ոչ-
ինչ յիշատակութիւն չունեին իրենց նախնիքների
կենցաղի մասին: Լօմօնօսովը պահանջեց, որ այլ-
ևս չ' գործածէն օտար բառեր: Պետրոս Մհծի ժա-
մանակ շատ բառեր էին ներմուծուել մեր լեզուի
մէջ—տում էր Լօմօնօսովը.—օտար բառերի փո-
խարէն գործածեցէք եկեղեցա-ուաւոնական բառեր:
որոնք աւելի հասկանալի են Ռուսներին»:

Ապա նա աշխատեց Ռուսաստանում ռւսում-
նարաններ հիմնել այնպէս, ինչպէս արտասահմա-
նում տեսել է և որ այդ գալոցները լինին բոլոր
մեծ քաղաքներում: Դրա խնդրանոք Ելիզաւեա
թագուհին հիմնեց Մոսկուայում ռուսաց առաջի
համալսարանը (1755 թ.): Մի քանի տարուց յետոյ
Մոսկուայի համալսարանի բագում կանգնեցրին Լօ-
մօնօսովի արձանը: Համալսարանի մօառվ իւրաքան-
չչւր անցնողը կարող է տեսնել այդ արձանը: Լօ-
մօնօսովը ցանկացաւ Պետերբուրգում և Կիևում
ևս հիմնել համալսարաններ, բայց չ' յաջողուեց:

XVII.

Մեծ նեղութիւններ կրեց Լօմօնօսովը պատասահմանից վերագառնալիս, այդ միւնքյն էր նրան համար, միայն թէ հասնէր իր նպատակին և ինչ պէս մենք տեսանք չտիտղանց յամառ էր կամ իմաստը աւելի ազնուացնելու համար, աւելոցնենք որ երկաթէ կամքի տէր լինելով, ինչ որ ցանկանում էր իմանալ, անպատճառ պէտք է իմանար, իմանալ մատածում էր հասկանալ—անպայման աշխատում էր հասկանալ Այդպէս միանդամ նա մտածեց շինել կարմիր ապակի, մի նոր բան, որ այդ ժամանակ դեռ գործածական չէր և որի մասին ոչ ոք չգիտէր:

Լօմօնօսովը մտածեց ինքը իւր մտածողութեամբ գանել այդ գիւտը: Նատ փորձերից յետոյ վերջապէս յաջողուեց նրան այդ բանը, և մինչեւ անգամ շատ շատերին սովորեցրեց գոյնզգոյն ապակի շինելու ձեւը: Նա այդպէս շատ բանի ձգտեց ու հասաւ և որպէսզի տալածէ գանազան տեղերում այդ գիւտի համբաւը, նա նկարագրեց իւր ուսանուողներում: Այդ գիւտի մասին լսեցին՝ թագուհին, պալատականները և ուրիշ բարձր գիւղ ունեցող մարդիք: Բայց հասարակ ժողովրդից այդ բոլոր անյայտ էր մնում և այլապէս չէր կարել. աւրիւ անյայտ էր մնում և այլապէս չէր կարել. առաջին՝ որ ընդհանրացած լրագիր դեռ չկար և երկրորդ՝ որ լինելն անդամ նպատակայարմար չէր,

Քանի որ ժողովուրդը անդրագիտ էր, որ նոյն կարդալու սառնութիւնը այժմ իսկ նկատում է ժողովրդի մէջ:

Արտասահմանում Լօմօնօսովին գովեցին իւր գիտնական աշխատանքի համար, իսկ ուռւներից շատ ըշերը եղան, որ զնահատեցին այդ մարդուն:

XVIII.

Պետերբուրգում սկզբներում սաստիկ նեղութիւն էր կրում Լօմօնօսովը նիւթական կողմից, երկար ժամանակ միջոց չուներ Մարբուրգից Պետերբուրգ տեղափոխելու կնոջն ու երեխային նարունակ վէճեր էր ծագում Լօմօնօսովի և իւր հակառակորդների մէջ: չէին ուզում իրեն մեծ ոռօճիկ տալ օտարականները: Ամեն ինչ զուտ ազգային դարձնելու համար, Լօմօնօսովը ուզեց վոնդել այդ բոլոր այլազգի պրօֆեսորներին և ուռւներ փոխարիներ իսկ այդպիսի գիտնականներ որտեղից կարելի է ձարել պատանի Խուսաստանում, որ ձանաչեր իւր գործը բաւական սահմանափակ մտքով: ահա այդ բանը Լօմօնօսովին սաստիկ նեղացնում էր: Ճեմարանից գառնում էր նա միշտ յուզուած և թերեւ կարողանում էր վերջ տալ սրտի ալեկոծումներին խմիչքներով:

Լօմօնօսովը շատ գործեց: Ժամանակ էր լինում, որ ձաշելու ժամն իսկ մոռւանում էր և այդպիսով նրա տոկուն և եռանդուն գործունէութիւնը պա-

կաս չ' վկասեց առողջութեանը. մէկ կողմից օդիի
չափազանց խմելը, որ միշտ այրում էր նկրալ և
դաւում առողջութիւնը: Ենորհիւ այդ աննպաստ
հանգամանքներին, չնայելով իւր բնական ամուր
կազմութեանը, մեռաւ Լոմնոսովը 1765 թուին
ապրիլի 4-ին, 54 տարեկան հասակում:

Նլա յուղարկաւորութիւնը բաւականին փառաւոր էր, ինչպէս լինում են սովորաբար նշանաւոր մարդկանց յուղարկաւորութիւնները:

Դագաղի յետելից դնում էին պալատականները
և ձեմարանի աշակերտները:

Թաղեցին նրան Պետերբուրգի Նևսկի մենաստանում, դադաղի վրայ կանգնեցրին մարմարինէ արձան, արձան կանգնեցլին դրձեալ նրա հայրենի Խօօլմօգորսկի քաղաքում։ Պօլոս Ի կայսրը ընդմիշտ ազտակց պիտահարկից Լօմօնօսովի ըրոջ որդուն—դիւլացի Պետրոս Գոլովինին իւր ամբողջ տոհմով ԱՀա թէ ինչի հաստաւ Սրբանդելսկի գռեհիկը։ Նա ոչ մէկին պարտական չէ այդ աստիճանին հասնելով, բացի միայն իւր սեփական սիրոյ և բարի կալքին։

Ψερλα:



Sh
104.
WY

Carm
T217

2001.

0016352

57013



